

*Detroit*

Մարտ 2, 1953

Արժանաշնորհ  
Տ. Առնակ ՔՀՆԿ. Գասպարեան  
Նսխագահ Հոգաբարձութեան  
Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ  
Տիթրոյթ:

---

Արժ. Տէր Հայր.

Ստացուած է Յետըվար 22 թուակիր Ձեր գրութիւնը որով կը տեղեկացնէիք թէ Ձեր նախագահութեամբ տեղի ունեցած է Համայնքի Հոգաբարձական մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ ընտրողներու մեծ մասին վստահութիւնը կը վայելեն իբրեւ Եկեղեցւոյ նախանձախնդիր, անձնուէր եւ պարտաճանաչ անդամներ, կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը ըստ յիշեալին.-

Տիարք Հաուրըտ Աթէշեան  
Մարթին Արզարեան  
Ներսէս Ներսէսեան  
Սիմոն Թաշճեան  
Հայկազ Նազուպեան

Կ'օրհնենք նորընտիր Հոգաբարձուները եւ վստահ ենք որ անոնք իրենց ջանքերը միացնելով պաշտօնի վրայ մնացող անդամներուն աշխատանքներուն պիտի գործեն Աստուծոյ փառքին եւ մեր սուրբ Եկեղեցւոյն պայծառութեան Համար: Մաղթելով կարողութիւն եւ յաջողութիւն ի Տեառնէ

Մնամք Ձերմ սիրոյ ողջունիւ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՅ ԱՄԵՐԻԿԱՅԻ



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

## Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N. Y.

Մարտ 24, 1955

Արժանաշնորհ  
Տ. Առնակ ԲՀՆյ. Գասպարեան  
Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյն  
Ցիթրոյթ.

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք Մարտ 14 Թուակիր Ձեր Միական տեղեկագրութիւնը, որով կը հաղորդէիք թէ Ձեր Նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ Միական Խորհուրդի անդամոց ընտրութիւնը, եւ ներկայցնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէիք ընտրուած անձանց պաշտօնի վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ ընտրողներու վստահութիւնը կը վայելեն իբրեւ Եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէր եւ պարտաճանաչ անդամներ: Գրովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալիս:

### Տիարք՝

Հայկազ Եաղուպեան  
Մարթին Աբգարեան  
Հայկ Ճիզմէճեան  
Ներսէս Ներսէսեան  
Վահէ Բաբելեան

Կ'օրհնենք Միական Խորհուրդի նորընտիր անդամները եւ վստահ ենք որ անոնք իրենց շնորհքով միացնելով Ձեր եւ իրենց պաշտօնակիցներու աշխատանքներուն, պիտի գործեն մեր ժողովուրդի հոգեւոր օգտին: Սուրբ Եկեղեցւոյ պայծառութեան եւ Աստուծոյ փառքին համար:

Մաղթելով կար եւ յաջողութիւն ի ձեռննէ.

Մնամք հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ.

Աղօթարար

ՄԱՄԱՐԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

## Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N. Y.

8

Թիւ 610  
Մարտ 20, 1956

Արժանաշնորհ  
Տ. Առնակ Քհնյ. Գասպարեան  
Նախագահ Միսական Խորհուրդի  
Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Տիթրոյթ.

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք Մարտ 10, 1956 թուակիր ձեր ծխական տեղեկագրութիւնը, որով կը հաղորդէիք թէ ձեր նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ Միսական Խորհուրդի անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէիք ընտրուած անձերուն պաշտօնի վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ իբրեւ Եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէր եւ պարտաճանաչ անդամներ, կը վայելեն ընտրողներու վստահութիւնը, զրովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.-

Տիարք՝ Հայրապետ Միքայէլեան  
Յակոբ Խաչիկեան  
Վահրամ Պօյաճեան  
Արշալիր Եղիսէեան  
Դանիէլ Շահան

Կօրհնենք Միսական Խորհուրդիդ նորընտիր անդամները եւ վստահ ենք որ անոնք եւս իրենց շնորհքով միացնելով ձեր եւ իրենց պաշտօնակիցներու աշխատանքներուն, պիտի գործեն ծուխիդ հոգեւոր օգտին, Ս. Եկեղեցւոյդ պայծառութեան եւ Աստուծոյ փառքին համար:

Մաղթելով ձեզի կարողութիւն եւ յաջողութիւն:

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՄԱՄԱՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի



REV. ARNAK KASPARIAN, PASTOR  
50 RHODE ISLAND  
HIGHLAND PARK 3, MICHIGAN  
TOWNSEND 8-7563

Մայիս 20, 1957

Պատրիարք

Տ. Գրիգորի Կրթ. Փայլակներ  
Արևմտյան Հայաստանի Կրթ. Փայլակներ  
Երևան, Է. Ե.

Ա. Յուրի. Կրթ. Փայլակներ Երևանի Հայաստանի Կրթ. Փայլակներ  
Մայիս 17, 1957 թ. Հայաստանի Կրթ. Փայլակներ Տոհմ 10, Համ.Ց 2.00 թ. Վր  
Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ  
Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ  
Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ  
Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ

- 1) Երևանի Կրթ. Փայլակներ 166 Բանալ
- 2) Հայաստանի Կրթ. Փայլակներ 158 Բանալ
- 3) Փայլակներ 137 Բանալ
- 4) Երևանի Կրթ. Փայլակներ 96 Բանալ
- 5) Երևանի Կրթ. Փայլակներ 92 Բանալ

Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ

- 1) Երևանի Կրթ. Փայլակներ 131 Բանալ
- 2) Փայլակներ 120 Բանալ
- 3) Երևանի Կրթ. Փայլակներ 107 Բանալ

Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ  
Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ  
Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ

Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ  
Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ  
Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ Երևանի Կրթ. Փայլակներ



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԻԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

## Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N. Y.

Քիւ 1675  
Մարտ 22, 1957

Արժանաշնորհ  
Տ. Առնակ ՔՀՆՅ. Գառապրեան  
Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Տիբրոյթ.

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք 1957 Մարտ 20 թուակիր Ձեր Միական տեղեկազիրը, որով կը տեղեկացնէիք թէ Ձեր նախագահութեան տակ գումարուած Միական Ժողովին մէջ ընտրած էք Միական Խորհուրդի անդամները, եւ ներկայացնելով ընտրութեան արգիւնքը, կը խնդրէիք ընտրուած անձերուն պաշտօնի վաւերացման պաշտօնազիրը:

Նկատի ունենալով որ ներքոյիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ իրենց եկեղեցւոյն պարտահանաչ անդամներ կը վայելեն ընտրուելու վստահութիւնը, գրով կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին. —

Տիարք՝ Եղուարդ Սարգիսեան  
Հայկ Ճիզմէնեան  
Գարլ Սարահեան  
Ճէզ Գավլացեան  
Միւշէ Թօփալեան

Կը մաղթենք Ձեզ եւ Պատուարժան Միական Խորհուրդիդ թուր անդամներուն համերաշխ եւ բեղմնաւոր գործունէութիւն յօգուտ Հայաստանեայց Եկեղեցւոյ Պայծառութեան, եւ կաղօթենք ամենիդ արեւշտութեան եւ բարօրութեան համար:

Մեամբ սիրոյ ողջունելու  
Աղօթարար

ՄԱՄԱՐԷ ԱՐԸՍԳԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Ամերիկայի Հայոց

Քի 3220  
Փետրուար 21, 1958

Արժանաշնորհ  
Տ. Առնակ ՔՀՆՅ. Գասպարեան  
Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Յովհաննէս-Մկրտիչ Եկեղեցւոյ  
Տիբրոյթ

Սիրելի Տէր Առնակ,

Առաջածինն յո 1958 Փետրուար 16 թուակիր Ձեր միական տեղեկագիրը, որով կը տեղեկացնէիք թէ Ձեր նախադասութեան տակ գումարուած Միական Ժողովին մէջ ընտրած էք Միական Խորհուրդի անդամները, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէիք ընտրուած անձերուն պաշտօնի վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ներքոյ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ իբրեւ Եկեղեցւոյ պարտահանաչ անդամներ կը վայելեն ընտրողներու վստահութիւնը, գրովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը ըստ Հետեւեալին. --

- Պրնք. Սիմոն Մոզեան
- Ճորճ Կարկարեան
- Արշաւիր Եղիսեան
- Վահրամ Պոյաճեան
- Հայրապետ Միքայէլեան

Կը մաղթենք Ձեզ եւ պատուարժան Միական Խորհուրդիդ բոլոր անդամներուն Համախոհ եւ բեղմնաւոր գործունէութիւն յօգուտ Հայաստանեայց Եկեղեցւոյ պայծառութեան, եւ կաղօթենք ամենքիդ առողջութեան եւ բարօրութեան Համար:

Մնամք սիրոյ ողջունի  
Աղօթարար

ՄԱՄԱՐԷ ԱՐՔԵՂԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Detroit

Թիւ 159  
Մարտ 17, 1959

Արժանաշնորհ  
Տ. Առնակ ԹՀՆԵ. Գասպարեան,  
Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ,  
Տիֆլիզի.

Միբելի Տէր Առնակ.

Ստացած ենք 1959 Մարտ 12 թուակիր Ձեր Միական Տեղեկագիրը, որով  
կը տեղեկացնէք թէ Ձեր նպատակաւորութեամբ գումարուած Միական Ժողովին մէջ  
ընտրուած են Միական Խորհուրդիդ նոր անդամները, եւ ներկայացնելով ընտրու-  
թեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձներուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ վերոյիշեալները ըստ օրինի ընտրուած են եւ  
իրբեւ պարտաւճանաչ անդամները կը վախճին ընտրողներու վստահութիւնը,  
այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը հետեւեալ կարգով:—

- Տիարք Հայկ Ճիգմէճեան
- Եղուարդ Սարգիսեան
- Ճէր Գալլաքեան
- Գարլ Սարանեան
- Մարթին Մանուկեան

Նանկ կը վաւերացնենք Գատուարժան Միական Խորհուրդիդ Դիւանը՝  
/որոնք Արշալիր Եղիսեան՝ ատենագետ, Սիմոն Մոզեան՝ Ատենադպիր, Եղուարդ  
Սարգիսեան՝ Գանձապահ/ եւ կը մտադրենք Ձեզի եւ Միական Խորհուրդիդ Համա-  
խոհ եւ բեղմնաւոր զործու նէութիւն ի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկե-  
ղեցւոյ եւ յօգուտ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մեամք Տիրաւնդ սիրոյ ողջունիւ  
Ազօթարար

ՄԻՈՆ ԱՐՏԵՊԵՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի



St. John's Armenian Church

ՄԲ. ՅՈՎԶ. ՄԿՐՏԻԶ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

REV. ARNAK KASPIANIAN, PASTOR  
REV. DIRAN PAPAZIAN, ASSOCIATE PASTOR

1335 OAKMAN BOULEVARD



TOWNSEND 6-9122



DETROIT 38, MICHIGAN

12 Մարտ, 1959

Գեր.  
Տ. Սիրոն Արք. Մանուկեան,  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,  
ի ն.-Ե., ն.-Ե.

Գեր. Սրբազան Հայր,  
Տիեթրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ Միական Համայնքիս Տարեկան  
Ընդհանուր Անդամական Ընտրական Ժողովը գումարուեցաւ Կիրակի 1 Մարտ, 1959-ին,  
ժամը 2.00 յ. մ., Հայ Մշակութային Տան սրահին մէջ, նախագահութեամբ Տ.  
Առնակ եւ Տ. Տիրան Բհնյ. Հայրերու եւ Ատենապետութեամբ Տիր Հայկազ  
Եղուպեանի:

Մանրամասնութիւնները սոյն Միական Ընդհանուր Ժողովին՝ Առաջնորդարան  
փութով պիտի առաքուին: Մինչ այդ, ներկայիւս կը փափաքէինք Միական Խոր-  
հուրդիս ղաղարեալ հինգ անդամներու փոխան նոր անդամներու ընտրութեան  
արդիւնքը հաղորդել Ձերդ Սրբազնութեան, խնդրելով ձեզմէ անոնց վաւերացումը:

Ընտրութեան մասնակցեցան եւ քուէարկեցին 239 իրաւասու անդամներ Միական  
Համայնքէս:

Քուէարկութեան արդիւնքը եղաւ հետեւեալը.-			
Պարոնայք	Հայկ ձիզմէճեան	-վերընտրուած-	180 քուէ
"	Եղուարդ Սարգիսեան	"	174 "
"	Ճէք Գավլաքեան	"	153 "
"	Գարլ Սարաճեան	"	144 "
"	Մարթին Մանուկեան	առաջին անգամ ըլլալով ընտրուած	125 "

Մեր Միական Խորհուրդի ընթացիկ տարուոյ ամբողջական անուանացանկը ներ-  
փակած ենք, հանդերձ հասցէներով եւ հեռաձայնի թիւերով:

Կուզէինք նաեւ առ ի գիտութիւն աւելցնել որ Միական Խորհուրդս իր Ուր.  
6 Մարտ 1959 նիստին մէջ գոց քուէով ընտրեց իր նոր ղեւանը, որ անցեալ տար-  
ուայ միեւնոյն ղեւանը պատահեցաւ որ ըլլայ, ըստ հետեւեալին:-

Պարոնայք	Արշաւիր Եղիսեան	Ատենապետ
"	Սիմոն Մոզեան	Ատենաղպիւր
"	Եղուարդ Սարգիսեան	Գանձապետ

Կսպասենք Ձեր վաւերացումին, որպէս զի մեր Գագ Միական Խորհուրդի նոր  
կազմին ընծայման արարողութիւնը ունենանք, եւ մեր նոր ղեւանը պաշտօնապէս  
գործի անցնի:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս. աջոյն եւ խորին ակնածանօք՝

Wagaz Yaghoobian  
Հայկազ Եղուպեան  
Ատենապետ

Տիրան Բհնյ. Փափաքեան  
Նախագահ Միական Ընդհանուր Անդամական Ժողովի

Թիւ 113  
Մարտ 16, 1960

Արժանաշնորհ  
Տ. Առնակ ՌՀՆՅ. Գասպարեան  
Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Տիֆրոյթ.

Սիրելի Տէր Հայր.

Ստացած ենք 1960 Մարտ 14 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով  
կը տեղեկացնէք թէ Ձեր նախագահութեամբ Մարտ 13ին գումարուած ժխա-  
կան ժողովին մէջ ընտրուած են Միական Խորհուրդի նոր անդամները, եւ  
Ներկայցնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն  
վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ վերոյիշեալ անձերը ըստ օրինի ընտրու-  
ուած են եւ իբրեւ Եկեղեցւոյ զարտանաչ անդամներ կը վայելեն ըն-  
տրուողներու վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւ-  
նը հետեւեալ կարգով. -

- Տիարք՝ Եղուարդ Գորգոյեան
- Հայրապետ Միքայէլեան
- Ճօրճ Սաշլարճեան
- Զարլս Սթամպուլեան
- Տուկլըզ Դագէսեան
- Աղամ Կարապետեան

Կ'օրհնենք նորընտիր անդամները եւ կը մաղթենք Ձեզի ու  
պատուարժան Միական Խորհուրդիդ համերաշխ ու բեղմնաւոր գործունու-  
թիւն ի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ եւ յօգուտ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Առաջնորդարանի

Detroit



# Diocese of the Armenian Church of North America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ՍՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Առաջնորդ

630 Second Avenue, New York 16, N.Y. ★ Murray Hill 6-0710

Archbishop Sion Manougian  
Primate

Թիւ 1949  
Մարտ 3, 1961

Արժանաշնորհ  
Տ. Առնակ Զհնյ. Գասպարեան  
Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Տիթրոյթ.

Սիրելի Տէր Հայր.

Ստացած ենք 1961, Փետրուար 28 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 26ին գումարուած Միական ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով ցուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական ժողովը տեղի ունեցած է թեմական կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եք ընտրուած անձերը, իբրեւ եկեղեցւոյ նախանձախնդիր ու նուիրեալ անդամներ, կը վայելեն Ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին. —

- Տիարք՝ Մարթին Մանուկեան
- Մարթին Աբգարեան
- Հայկազ Եազուպեան
- Ճէք Սմսարեան
- Խաչիկ Սէմիզեան

Օրհնելով նորընտիր անդամները՝ կը մաղթենք Ձեզի եւ պատուարժան Միական Խորհուրդիդ յաջող եւ արդիւնաւոր գործունէութիւն, ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ ու ի շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիբաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK 16, N.Y.

MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ասպետ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 4104  
Մարտ 20.1962

Արժանաշնորհ  
Տ. Տիրան ԲՆՅ. Փափագեան  
Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Տիթրոյթ.

Սիրելի Տէր Տիրան.

Ստացած ենք Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր Նախագահութեամբ՝ 1962, Փետրուար 16ին գումարուած համայնքիդ Միական ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած անձերը, իբրեւ Եկեղեցւոյդ պարտաճանաչ ու նուիրեալ անդամներ, կը վայելեն Ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը ընտրութիւնց, ըստ հետեւեալին.

Տիարք՝ Արամայիս Կարապետեան  
Եղուարդ Գորգոյեան  
Ջօրճ Մաշլազեան  
Տաքէս Տաքէսեան  
Հէրրի Գըզըլեան  
Միհրան Հօփլամազեան

Կը յանձնարարենք որ առաջին առիթով Առաջնորդարան ղրկէք Ձեր Միական Խորհուրդի Նոր դիւանի կազմի անուն-հասցէները:

Օրհնելով Միական Խորհուրդի Նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ պատուարժան անդամներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութիւն, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Ազօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK 16, N.Y.



MURRAY HILL 6-0710

ՄԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 6043

Մարտ 28, 1963

Արժանաշնորհ  
Տ. Տիրան ԶՀՆՂ. Փափազեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Եւ Նախագահ Պատուարժան Միսկան Խորհուրդի  
Տիթրոյթ.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք 1963 Մարտ 23 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով  
կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Մարտ 15ին զուամբուած տա-  
րեկան Միսկան ժողովը կատարած է Միսկան Խորհուրդի մասնակի ըն-  
տրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խընդ-  
րէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն եւ ընտրութիւնը կա-  
տարուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները իբրեւ  
անդամ Միսկան Խորհուրդին.

- Տիարք՝ Մարթին Արզարեան
- Խաչիկ Սէմիզեան
- Մարթին Մանուկեան
- Եղուարդ Եղուպեան
- Վահէ Բարէլեան
- Յարութիւն Արզարեան

Կը յանձնարարենք որ Ձեր եւ Միսկան Խորհուրդի ամփոփ տե-  
ղեկագիրները եւ հաշուեկշիռը, ինչպէս նաեւ Միսկան Խորհուրդի նոր  
դիւանի կազմի անուն-հասցէները Առաջնորդարան զրկէք փութով:

Օրհնելով Միսկան Խորհուրդի նոր կազմը՝ կը մաղթենք ձեզի  
յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան շրջան մը, ի պայծառութիւն  
Ս. Եկեղեցւոյդ եւ ի Հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ  
ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Ազօթարար

ՄԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Եւ Գանատայի